



ՀԱՏՈՐ ԻՔ

1891

ԱԳՐԻՆ

# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՑՈՒՑԱԿ

### ԷԱՑԵՐԷՆ ԳՐԶԱԳՐԱՑ

### ՄԱՏԵՆԱԳՐԱՆԻ ՈՒԽՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ

### Ի ՎԵՆԵՏԻԿ

### 2

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐԲ

(Տես յ'էջ 65, շարունակութիւն)



**Բ.** Օրինակ. բոլորգիր մաքուր և վարժ, ի վերայբամբա-  
կեայ թղթոյ. երկայնութիւն 0.35 և լայն. 24, — (Թիւ  
գրչ. 844). տեղ տեղ՝ առ Հնութեան և յաճախ գործա-  
ծութեան մաշեալ. այսպէս և Հին հազմն քայքայեալ, և  
նորագոյն կապով կապուած, ընտիր և սրտաբուղխ յիշա-  
տահարանօրն, քայք թուական գրչութեանն կը պակսի.  
Թուի ի վերջ երեքտասաներորդին գրուած, Ասացողն է Քորոս. իսկ գրչըք

կը յիշուին վասիլ ոմն և Գէորգ: Զուևի պատկեր, ոչ խորանաց սկզբնաւորութեանց զարգք, և ոչ տառից:

Գրքին սկիզբը գրուած են ամենայն նախագրութիւնք Հին և նոր կտակարանաց, Հաւանականաբար ի տարբեր գրչէ, և յիտոյ յիշատակարան. «Տէր Եհուուս Քրիստոս աստուած, զթա ողորմես Գէորգ վարդապետին որ զնա խաղտութիւններս և զգլխնիս ամէն Հին կտակարանացս շինել. և զՄարտիրոս վարդապետն որ զարինական ետ. և զԳրիգոր և զամուսին իւր որ ըզնիւ թա շնորհեցին. և զողորմելի գերիս՝ ձնաւղք և ևղբարբք և քեռ և զարմիւք. և զայնոսիկ որ յիշին զմեզ աստուած ողորմայիւ: Եւ քեզ ընդ հաւր և ընդ Հոգւոյդ սրբոյ աւրչնութիւն և զոհուութիւն և փառք և պատիւ, այժմ և միշտ...»

Յետոյ գլուխք Կննդոց. և ի վերջ գրոցն. «Թորոսի պատուական քահանայ ստացորի գրոյս, յիշատակ լիցի յնթերցողսդ. ընդ նմին և տառաւորաւ ոգւոյ Ստեփ. և ծնողաց մերոց»: Եւ այնպէս յիշատակարան՝ բազում ուրեք կրկնուած ի գիրսն.— Ի վերջ Երկրորդման օրինաց. «Փառք քեզ Քրիստոսաստուած մեր վասն ամենայնի, որ զարացուցեր զտառապետալ քո Թորոս ի մէջ ծանրութեան մեղացս Հոգոց զայս ձեռահիւս տառս տալ քեզ պատարագ յինքնավաստակ երկոց: Ո՛վ տէր տուող արինաց և լցուցանող՝ զհաճեալս ընդ արէնս քոյ և զչերեալս յարէնս մեղաց պարեցոյ ի մարմնոյ աստի մահու շնորհաւք, և Հասոյ յիմանալիցաց քողաքակցութիւն ուղորմութեամբ»: — Ի վերջ Յետուայ գրոց. «Ո՛վ սուրբ Յեսու և Եղէսազար և Փննեհս, բարեխաւսեցէք առ Քրիստոս աստուած, վասն Թորոսի բազմամեղիս և ձնալցաց իմոց և եղբարց, և քեռ. և այնոցիկ որ յիշին զմեզ և մեղաց Թողութիւն խնդրեն յաստուծոյ. և Քրիստոսի աստուծոյ մերոյ փառք...»: — Ի սկիզբն առաջին գրոց Թաղաւորութեանց. «Թորոսի նուաաս ստացուորի զաստուածային մատեանս Հոգի ընթերցաւղաց աղաւթից յանձն եղիցի. զի արժանասցուք զընդ Հանելի արինակացս ճըշմարտութիւն վանելի պատանեալս ընդ պաշտանեցեալն ի մէջ Քրիստոս Եհուուս տէրն և Թաղաւորն. և նմա փառք յա...»: — Ի վերջ չորրորդ Թաղաւորութեանց. «Փառք ամենասուրբ... Յիշատակագրութիւն նախնեաց զատաւորաց և Թաղաւորաց Իւրայիսի. որք նստան ի գլուխ ժողովրդեան ի ժառանգել նոցա զՊաղեստին: Արդ գրեցաւ ի ձեռն բազմամեղի Թորոսի և Բարսղի ի յիշատակ ինձ և ձնալցաց իմոց և եղբարց իմոց՝ և քեռ իմոյ: Արդ որք ընթերցմամբ մխիթարիք ի սուրբ պատուիրանէս լուսաւորեցե՛կ աստուած զՆոգիս ձեր, և ի շնորհ աղաւթից ձեր Հանգուսէ՛ ընդ վերին մշակացն ըստ մեծի ողորմութեանն իւրոյ յերկնից խոստացեալ աքայլութիւնն. և նմա փառք...»: — Ի վերջ առաջին Մնացորդաց. «Զարժանեալս և պատնիշապատեալս յարտարին թշնամեաց և ի ներքին գրծողաց զԹորոս և զձնաւզնն իմ և զեղբարսն և զքեռ՝ յիշեցէք ի բարի վայելողք ի դըրաւանս նկղութեանս ի խորշորագիծ ձեռահիւս մատեանս սուրբաւ Երկրորդ Մնացորդաց վերջ վեր գրուած, ու ինչպէս ըսինք՝ յանձնս կրկնուած փորք յիշատակարան ստացողին Թորոսի՝ պզտի տարբերութեամբ կամ յաւելուածով մը. «Թորոսի մեղաւորի և ծնողաց իմոց և եղբարց և քեռ և մեծամար յիշատակ լիցի յնթերցողսդ»: — Ի Նէճէմի, ուր ազգահամարն եցեղից Իւրայելի, ի ստորև իջին կը գտնենք Հետեւեալը. «Տէր Ներսիսի երեսն և կրկնաւ այս ազգահամար. յառաջին գլուխն, յերկրորդն և յերրորդս. վասն որոյ և ձանձրացեալ, զթիւքզ կարճեցի. զոնցն և ես զձաւզս, մի՛ մեղ գնե՛ր ընթերցաւղ աղաչեմք»: — Ի վերջն. «Ո՛վ տէր աստուած

Հասարակաց յոյս ամենեցուն որ յուսան ի քեզ, ողորմեա քո մեղաւոր ծառայիցս Թորոսի և ճնաւղաց իմոց և եղբարց և մաւրեղաւար Վասի և Ստեփանոսի քահանայի և ճնաւղաց իւրոց, վասն զի զգիծս ուսուցանէ. և որ զմեզ յիշեն»։ — Ի վերջ գրոցն էլսթերի. «Տէր Ներսիսի Համբարցոյն».

Հայեաց ի հրաշ որ պատմեցան,  
Ով ընթերցող է մխթերպն.  
Զի է յուսոյն ունայն չլարման  
Որք աղերսիւ յատուած յեղան:  
Իսկ մեր միջնորդ խաղաղութեան,  
Յիսուս Քրիստոս հաւր ժողոջն բան,

Վեցաք ի նոյն յոյսն ազատան,  
Եւս ընդունել զշնորհ ազնութեան.  
Որոյ նէր զկեանս մարմնական,  
Տունալ է վարս հոգնութեան,  
Առնուց թափ արքայական  
Ի հանգերմեալ կեանսն անվախանս:

— Ի վերջ գրոցն Յուզթայ. «Որ էրեկ և այսաւր և յամենայն ժամ նոյն ես տէր մեր Յիսուս Քրիստոս, և ոչ ամաչեցուցանեն զյուսացեալսն ի քեզ. Զրուծեալքս արեամբ քո քաղցու, Եւ խրատեալք ի նժդեհութիւն կենցաղոյս փորձանաւքս, ժողովեալ ի նաւահանգիստ երկնային խորանացդ՝ արասցես մասնակից լուսոյ փրճակի ժառանգութեան սրբոց քոց. Ով անարգամեծար տէր և փառաւորեալ ի շնորհս քո. զի և մեք լի բերան գոհասցուք զքէն ի յանվախման յաւիտեանսդ»։ — Երրորդ Մակարայեցուց. «Ով տէր աստուած, Հասարակաց յոյս՝ որ զամենայնս որ յիշեցին զքեզ յիւրաքանչիւր նեղութիւնս ոչ դարձուցեր ամաչեցեալս. այլ արարեր առ նուսին զողորմութեան քո գառատութիւն, ի պատկառանս թշնամեաց իւրկանց և ի յի բերան գոհութիւն փրկելոցն, այց արաւ մեզ որ կամք ի ներքոյ պատուհասի մեղաց մերոց. Թորոսի և ճնաւղաց մերոց և եղբարց և քեռ և քուսուցչի մերոյ Թորոսի, և որ զմեզ յիշեն. և քեզ փառք»... — Սաղմոսաց. «Ով սուրբ Դաւիթ բարեխաւսեա առ տէր Յիսուս Քրիստոս աստուած վասն բազմամեղիս Թորոսի և ճնոցաց իմոց և եղբարց և քեռ, և Մարեմ տիկնի և Վասի, և այնոցիկ որ յիշեն զմեզ և մեղաց Թողութիւն խնդրեն յաստուծոյ»։ Յիմաստութեան զիրսն՝ ուր ասէ Սողոմոն. «Զի տարածամ սզով թախծեալ հայր՝ վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր», ի լուս. «Ազամեմնն թագաւոր մեռելիկ որդւոյ իւրոյ արար պատկեր»։ — (Մալ երկոտասան մարգարէիցն՝ մանրագիր նշանակեալ է ի ստորեւ իջից ի վերջ իւրաքանչիւր գլխոց մարգարէութեանց)։ — Եզեկիելի. «Աւրհնութիւն քեզ գովութեամբ և փառք երկրպագութեամբ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ խաւսեցար ի ճառս գրոց սրբոց քոց մարգարէից զխորհուրդս քո հրաւըլս. Զոր և եկեալ ի լրումն ժամանակաց արարեր զվամս հաւր քո. և լցուցեր զգրեալս յաւրէնս Մովսեսի և ի մարգարէս և ի սաղմոսս վասն քո. չարչարեալ վասն մերոյ փրկութեան և յարուցեալ մտեր ի փառս քո, և շնորհիւ աւետեաց սուրբ հոգւոյդ կոչեցեր առ քեզ զեկեղեցի քո սուրբ ապախարութեամբ և յանուն քո մեղաց Թողութեամբ յամենայն ազգաց, ի ձեռն առաքելոց քոց. յորոյ արգանդէ ճնեալ և կրկնարուղիս ստեամբն սնեալ յանարգութենէ յառաջ կոչեցեալ, և քո անձութեամբ շնորհից արժանի եղեալ տառապեալս Թորոս վերջինս ի բարեաց և վերջինս և անբարի աւուրս մնունդ, վասն առաւել գառնութեանց աւուրցս քնտրեցի զլուծութեամբ նըստել ի տան և սպանել անսպառ քո ողորմութեանդ որ բաժին իմ ես յամենայն էիցս, և նուիրեցի քեզ որ անկարատգ ես զայս ձեռահիւս լրութեամբ կրող զնախանգութիւն սրբոց քոց մարգարէիցն. ընկալ, ընկալ, ով որ քաղցր է քեզ մարդկան տուրեւառութիւն, և տուր զաւրութիւն չարամանել և յետու ի սա զլրումն ելից աւետեաց սոցա ի նոր քո ա.

ւետարանն, որ նորագութիւնդ ես մեզ, տէր մեր և սատուած, և քեզ փառք. » :

Ի վերջ Մատթէի աւետարանին, « Ով սուրբ Մատթէոս՝ բարեխաւսեա առ Քրիստոս սատուած վասն բազմամեղիս Թորոսի, և ծնողաց իմոց », և այլն: Նոյնպէս և յաւարտ Մարկոսի և Ղուկայ աւետարանաց: Ի Յովհաննէս՝ շնացեալ կնոջ պատմութիւնը գրուած է ի լուսանցսն, և ի ստորև ծանօթութիւնս « Զայս շնորհ տեսան սրանչելաց Եւսերի ժամանակս. գրէ, թէ ի հերոսյիցի աւետարանէ անտի ընկալաւ եկեղեցի. վասն այնորիկ և առննթիբ պատշաճ Համարեցաք կարգել ընթացից Եովհաննու աւետարանիս: Զոր յիշատակէ յերրորդ դարութեան ԼԹ գլխին բանիւ Պապիս»: Բաւարտ աղերսին Եւթադի. « Ով սուրբ առաքեալք Պետրոս և Պաւլոս և ամենայն խումբք սուրբ առաքելոցք. բարեխաւսեցէք առ տէր Յիսուս Քրիստոս սատուած մեր, վասն Գէորգեա վարդապետի որ զԳործքս գրեաց. և վասն բազմամեղիս Թորոսի և ծնաւոց իմոց. »: — Պաւղոսի Թուղթն երրորդ առ կորնթացիս գրուած է յիս սովորական ձևին « Գրեցի և կարգեցի » և այլն: Եւս Բայանութեան Եովհաննու. « Աստուածայայտ նութեանն ժամակարգութիւն. այլ և բովանդակ տարւոյն ըստ ընթերցուածին, և ըստ այլ կարգացմանց »: Իսկ պահարան Աստուածանչիս՝ միայն ի վերջն, երկաթագիր մեծ՝ մասն յաւետարաննն Ղուկայ:

### ՇԷՔՍԻՐ ԵՒ ՊԱՔՈՆ

Նախընթաց ամսաթերթին մէջ ցուցուցինք՝ թէ բոլորովին անհիմն է Շէքսպրի անուամբ եղած թատերական խաղերն ընծայել Պաքոնի, և թէ իգնատիոս Տոնէլլիի 'ի մէջ բերած պատճառքն բնաւին անզոր են: Հիշսխալիս Անտրիկայ Հանդէս լրագիրն Ուիլեմ Զօլֆի՝ որ Շէքսպրի նշանաւոր մեկնիչն է, յօդուած մը հրատարակեց, յորում 'նա Տոնէլլիի ծածկագրութիւնը բոլորովին կը ջնջէ և կը հերքէ:

Տոնէլլի իւր հաշիւներն հիմնած է 1623ին եղած տպագրութեան վրայ, զոր կը համարին թէ Պաքոն ըրած է: Իւ եթէ այս սխալ ըլլայ, Տոնէլլիի ամենայն հաշիւները անհիմն կը մնան: Սակայն Շէքսպրի գործոց վրայ ուսումն ընող անձինք կը հաստատեն՝ թէ այն Շէքսպրի թատերախաղուց տպագրութիւնն եղած է նորա մահուընէն եօթը տարի ետքը, իրեն երկու ընկերաց ձեռքով, որք ոչ կարող էին և ոչ ալ փորձ՝ այնպիսի գրականական գործոյ մը ձեռք զարնելու: Իւրաքանչիւր ընթերցող կարող է քննել զայն կամ բընագրին և կամ անոր նմանահանութեան վրայ, զոր ամենուրեք աժան կը վաճառեն:

Արդ կրնանք պնդել թէ բոլորովին յայտնի է և ամենին անտարակոյս՝ որ այս տպագրութիւնս սրբագրուած չէ գրագէտ անձէ մը, որ տպագրութեան արուեստին սակաւ մի տեղեկութիւն ունենայ: Ուստի ևս առաւել անըմբռնելի կ'ըլլայ ըսել՝ թէ ֆրանկիսկոս Պաքոն սրբադրեր է զայն կամ խնամք տարեր է անոր: